# ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ. ԻՐԱՆ

*(2025 թ. ապրիլի դրությամբ)*

**Ա. Գ. Եվստրատով**

*Սեղմագիր*

*Հոդվածում վերլուծվում են ԱՄՆ-Իրան հարաբերությունները Դոնալդ Թրամփի նախագահության երկրորդ ժամկետի ընթացքում և դրանց հնարավոր հեռանկարները: Իրանի և Միացյալ Նահանգների փոխազդեցությունը դիտարկվում է ինչպես երկկողմանի հիմունքներով, այնպես էլ՝ հիմնվելով Մերձավոր Արևելքի հիմնական խաղացողների, ինչպես նաև Ռուսաստանի ազդեցության և շահերի վրա՝ չափազանց կարևոր և հաճախ որոշիչ լինելով ինչպես Վաշինգտոնի, այնպես էլ՝ Թեհրանի դիրքորոշումների համար:*

# ВНЕШНЕПОЛИТИЧЕСКАЯ ПОВЕСТКА США: ИРАН

*(по состоянию на апрель 2025 г.)*

***Евстратов А. С.***

*Аннотация*

*В статье анализируются американо-иранские отношения в период второго президентского срока Дональда Трампа и их возможные перспективы. Взаимодействие ИРИ и США рассматривается как на двусторонней основе, так и исходя из влияния и интересов ключевых ближневосточных игроков, а также России – крайне важных и зачастую определяющих для позиций как Вашингтона, так и Тегерана.*

# U.S. FOREIGN POLICY AGENDA: IRAN

*(по состоянию на апрель 2025 г.)*

**Evstratov A. G.**

*Summary*

*The purpose of this article is to present the ongoing military cooperation between Turkey and Pakistan over the past decade, highlighting its motivations and main areas. The study presents the types of joint military exercises and weapons exports, issues related to cooperation in the development of the military industry, as well as the opportunities and challenges of this partnership.*

**Անտոն Գ. Եվստրատով**[1]

# ԱՄՆ-Ի ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ. ԻՐԱՆ[2]

*(2025 թ. ապրիլի դրությամբ)*

## Ներածություն

Դոնալդ Թրամփի՝ ԱՄՆ-ի նոր նախագահի պաշտոնում ընտրությունը մի շարք հարցեր է առաջացրել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վերաբերյալ՝ միանգամից մի քանի ուղղություններով: Դրանցից ամենավիճահարույցներից և ամենաքիչ հասկանալիներից մեկը Իրանն է:

ԱՄՆ-ի և Իրանի Իսլամական Հանրապետության միջև առանց այդ էլ բարդ հարաբերությունները Դ. Թրամփի օրոք սպառնում են ոչ միայն անցնել տարափոխության փուլ, այլև վերածվել ռազմական առճակատման: Նման ենթադրությունների համար հիմք է հանդիսանում գործող ամերիկյան առաջնորդի հեղինակությունը, որը ձևավորվել է ոչ միայն նրա հայտարարությունների, թիմի անդամների կամ քաղաքական հայացքների հիման վրա, այլ նաև նրա նախկին նախագահական ժամկետի ընթացքում: Այն ժամանակ Դոնալդ Թրամփը տորպեդահարեց Իրանի և աշխարհի առաջատար միջուկային տերությունների «+Գերմանիա» կոլեկտիվի միջև ձեռք բերված «*միջուկային գործարքը*», որից հետո հրաման տվեց հրթիռային հարվածով վերացնել իրանական Ալ-Քուդս բրիգադի հրամանատար, արտերկրում ԻԻՀ հատուկ գործողության ուժերի փաստացի ղեկավար գեներալ Ղասեմ Սոլեյմանիին: Զարմանալի չէ նաև այն, որ իրանական կողմն, իր հերթին, ոչ միայն չի կարող, այլև չի ցանկանում երկխոսություն վարել իր

[1] Ավարտել է Վորոնեժի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետը (2010 թ.) և Վորոնեժի պետական տեխնիկական համալսարանի ասպիրանտուրան (2013 թ.): Պատմական գիտությունների թեկնածու է: Աշխատել է ռուսական տարբեր գիտական և Մեդիա կառույցներում: Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի Արևելագիտության ինստիտուտի դոցենտ (2024 թ., ք. Երևան): Գիտական հետաքրքրություններ՝ Մերձավոր Արևելք, Իրան, արաբական աշխարհ, իսլամ, շիա, մերձավորարևելյան քրիստոնեություն, Եվրոպայում ազգային և կրոնական սփյուռքների հիմնախնդիրներ, մահմեդական դավանանքի սլավոնական ժողովուրդներ: Հեղինակ է մի շարք գրքերի և ուսումնական ձեռնարկների, ինչպես նաև 200-ից ավելի գիտական և վերլուծական հոդվածների:

[2] Հոդվածը խմբագրություն է հանձնվել 06.05.2024 թ.:

աչքում այդքան անախորժ քաղաքական գործչի հետ: Ավելին, հաշվի առնելով Թրամփի՝ «*միջուկային գործարքից*» դուրս գալու փաստը, Իրանում նրան պարզապես հուսալի գործընկեր չեն համարում: Այս ամենը, չխոսելով նույնիսկ ավելի գլոբալ համաշխարհային գործընթացների մասին (Ռուսաստանի և Արևմուտքի միջև ավելի ու ավելի թեժ դիմակայություն, Իրանի փաստացի պատերազմ Իսրայելի հետ, համաշխարհային տնտեսության անկում և այլն), բառացիորեն պատերազմի է մղում Վաշինգտոնին և Թեհրանին: Վերջինս, սակայն, երաշխավորված է անկանխատեսելի, բայց, միանշանակ, ճակատագրական հետևանքներ հարուցել Մերձավոր Արևելքի և ամբողջ աշխարհի համար, ուստի պետք է պայմանավորվել, ինչը գիտակցում են ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ Իրանում: Ավելին, կողմերն արդեն իսկ կոնկրետ փորձեր են ձեռնարկել, թեկուզև առանց մեծ արդյունքների:

Ի՞նչ է պետք նախագահ Դ. Թրամփի օրոք սպասել ամերիկա-իրանական հարաբերություններից:

**ԱՄՆ–Իրան օրակարգը Դ. Թրամփի առաջին պաշտոնավարման օրոք**

ԱՄՆ-ի և Իրանի միջև բանակցությունների և նոր համաձայնագրի կնքման կարևորությունը գիտակցվում էր Թրամփի վերընտրվելուց շատ առաջ: Այս տարբերակը ցանկալի էր ինչպես ամերիկյան նախկին վարչակազմի համար, որը բախվել էր բազմաթիվ գլոբալ խնդիրների՝ Ռուսաստանի և Չինաստանի հետ բարդ հարաբերություններից մինչև հենց Թեհրանի միջուկային հնարավորությունների աճ, որն այժմ ուրանը հարստացնում է մինչև 60%՝ մարտական միջուկային լիցքեր ստեղծելու համար անհրաժեշտ 90% մակարդակի դեպքում, այնպես էլ Իսլամական Հանրապետության համար, որը լուրջ տնտեսական խնդիրների է բախվել ամերիկյան պատժամիջոցների համապատկերում, ինչպես նաև Լիբանանում, Պաղեստինում և Սիրիայում Թեհրանի ղեկավարած «*Դիմադրության առանցքի*» թուլացման լույսի ներքո:

Ընդսմին, ԱՄՆ-ի նախկին ղեկավարությունը՝ Ջո Բայդենի գլխավորությամբ, թեև Թրամփի վարչակազմից ավելի մեղմ էր գործում իրանական ուղղությամբ, սկզբունքորեն չփոխեց Իրանի նկատմամբ իր քաղաքականությունը. Թրամփի օրոք սահմանված պատժամիջոցների մեծ մասը պահպանվեց, իսկ դիվանագիտության միջոցով կողմերն այդպես էլ ընդհանուր եզրեր չգտան: Այս իմաստով Բայդենի

նախագահությունը կարելի է ինչ-որ առումով համարել երկրների միջև մերձեցման և փոխըմբռնման հասնելու բաց թողնված հնարավորությունների ժամանակ, քանի որ «*նոր հին*» առաջնորդի հետ Վաշինգտոնում դա շատ ավելի դժվար կլինի՝ ինչպես վերը նշված, այնպես էլ՝ շատ այլ պատճառներով:

Օրինակ, հենց ի պատասխան Դոնալդ Թրամփի փետրվարի սկզբին Իրանի գերագույն առաջնորդ Ալի Խամենեիին ուղղված նամակի, որում նա հոգևորականին իրանա-ամերիկյան բանակցությունների անհաջող ավարտի դեպքում սպառնում էր պատերազմով, Իրանի ղեկավարությունը մերժեց ամերիկացիների հետ ուղղակի դիվանագիտական խորհրդակցությունների բուն գաղափարը՝ թողնելով միայն երրորդ երկրների միջոցով դրանց իրականացման հնարավորությունը[3]: Փետրվարի 7-ի հայտարարության մեջ ԻԻՀ գերագույն առաջնորդն աներկբա մերժեց ամերիկացիների հետ ուղղակի, առանց միջնորդների բանակցությունների հնարավորությունը:

Դրա հետ մեկտեղ, չնայած հայտարարությունների նման ռազմատենչ տոնայնությանը, Իրանի Մեջլիսն այդպես էլ որոշում չի ընդունել ԱՄՆ-ի հետ դիվանագիտական փոխգործակցության անօրինականության մասին՝ այդպիսով պահպանելով համապատասխան հնարավորությունը, որն էլ այժմ օգտագործվում է Իրանի ներկայացուցիչների կողմից: Ինչ վերաբերում է իրանական ուղերձների բուն հնչերանգին, ապա դրանք, նախ և առաջ, պայմանավորված են ամերիկա-իրանական հարաբերությունների ընդհանուր հակամարտային ենթատեքստով, իսկ երկրորդ՝ ամենից առաջ ընդգծում են Թրամփի՝ իր նախորդ նախագահական պաշտոնավարման ժամկետում արդեն ստորագրված «*միջուկային համաձայնագրի*» կատարումից խուսափումը՝ ապագայում նման վարքագիծ թույլ չտալու նպատակով: Իրանի համար կարևոր են այն երաշխիքները, որ ԱՄՆ-ի հետ համաձայնագիրը ստորագրվելու դեպքում չի չեղարկվի գործող կամ հաջորդ ամերիկյան առաջնորդի քմահաճույքով:

Ավելին՝ Թրամփը, նույնիսկ բանակցային գործընթաց սկսելով Իրանի հետ, նոր պատժամիջոցներ սահմանեց նրա դեմ. հենց իրանական միջուկային ծրագրի շուրջ խորհրդակցությունների երկրորդ և երրորդ (Հռոմի և Մոսկատի) փուլերի միջև

[3] Իրանը ԱՄՆ-ի հետ բանակցություններում կքննարկի արտասահմանյան ակտիվների ապասառեցումը: (ռուս.), 28.04.2025, https://ria.ru/20250428/iran-2013789354.html?ysclid=maawuj19bo788934371 (բեռնման օրը՝ 01.05.2025):

ընկած ժամանակահատվածում հայտարարվեց իրանական տնտեսության նավթային հատվածի նկատմամբ նոր սահմանափակումների մասին: Իսկ դրանից մեկ շաբաթ առաջ Միացյալ Նահանգների պետքարտուղար և Դ. Թրամփի մերձավոր գործընկեր Մարկո Ռուբիոն հայտարարել էր, որ Թեհրանը չի կատարել 2015 թ. կնքված Միջուկային ծրագրի գծով Գործողությունների համատեղ համապարփակ ծրագրի (ԳՀՀԾ կամ «*միջուկային գործարքի*») պայմանները և կոչ է արել եվրոպական պետություններին, որոնք ստորագրել են այդ փաստաթղթի տակ, լուծել դրա հաստատումից հետո չեղյալ հայտարարված ՄԱԿ-ի հակաիրանական պատժամիջոցների վերադարձի հարցը: Դրա համար ձևական հիմք է դարձել իրանցիների կողմից ուրանի հարստացումը մինչեւ 60%-ի մակարդակ, այն դեպքում, երբ «*միջուկային գործարքով*» դա նրանց թույլատրվում է անել միայն մինչև 3,65%: Սակայն, ԱՄՆ-ի դուրս գալուց հետո ԳՀՀԾ-ն փաստացի չի գործում, և Թեհրանը պարզապես դրա պայմաններով իրեն պարտավորված չի համարում:

Իրանը, իր հերթին, այդ դեմարշները դատապարտել է որպես թշնամական, իսկ ի պատասխան ՄԱԿ-ի կողմից սահմանափակումներ մտցնելու հնարավորության՝ սպառնացել ընդհանրապես դուրս գալ Միջուկային զենքի չտարածման մասին պայմանագրից (ՄԶՉՊ):

**Նոր Թրամփը հին Թրամփը չէ**

Միևնույն ժամանակ, ԱՄՆ-ի նախագահի պաշտոնում Դոնալդ Թրամփի աշխատանքի առաջին իսկ օրերին, դեռևս առաջին ժամկետից արդեն ծանոթ դիրքորոշմամբ, ցույց տվեց Իրանի վերաբերյալ նրա ավելի կառուցողական, քան նախկինում էր, դիրքորոշումը՝ ինչ-որ առումով դիվանագիտական հաջողությունների հույս ներշնչելով: Այսպես, Իրանի հետ «*միջուկային գործարքը*» նշված էր որպես գործող ամերիկյան վարչակազմի առաջնահերթություններից մեկը, և հենց նախագահը հայտարարեց, որ ԱՄՆ-ը «*ցանկանում է*» հենց այդ գործարքը, ինչի համար ակտիվորեն համագործակցում է Իսլամական Հանրապետության հետ[4]:

Սակայն ապագա համաձայնագրի պայմանները մինչ օրս հստակ սահմանված չեն հենց ամերիկյան ղեկավարության կողմից: Մի կողմից, Թրամփը անձամբ

[4] Banai H., Black Swan Scenarios in U.S.-Iran Relations During Trump's Second Term. 16.04.2025, https://perryworldhouse.upenn.edu/news-and-insight/black-swan-scenarios-in-u-s-iran-relations-during-trumps-second-term/ (բեռնման օրը՝ 01.05.2025).

հայտարարեց, որ Իրանը «*պարզապես չի կարող միջուկային զենք ունենալ*»: Մյուս կողմից, մի փոքր ավելի ուշ, նա իրանցի պաշտոնյաներից պահանջեց ամբողջովին հրաժարվել ուրանի հարստացումից՝ նույնիսկ խաղաղ նպատակներով, անգամ՝ դադարեցնել հրթիռային ծրագիրը: Բացի այդ, հավատարիմ լինելով «*ուժեղ առաջնորդի*» իր վարկանիշին, ԱՄՆ-ի նախագահն իր հայտարարություններում չի բացառել Իրանի հարցի լուծման նաև ուժային սցենարը[5]:

Արդյունքում, կողմերը, որոնք արդեն անցել են ամերիկա-իրանական բանակցությունների 3 փուլ, չհասան որևէ կառուցողական արդյունքի: Ավելին, եթե երկրորդ փուլում՝ Հռոմում, խորհրդակցությունները տեղի են ունեցել ինչպես միջնորդավորված, այնպես էլ ամերիկյան պատվիրակության ղեկավար Սթիվ Ուիտկոֆի և նրա իրանցի գործընկեր Աբբաս Արաղչիի դեմ առ դեմ հանդիպմամբ, ապա առաջին և երրորդ փուլերում՝ Մոսկատում, իրանցիներն ամերիկացիների հետ շփվել են բացառապես Օմանի դիվանագետների միջոցով: Բացի այդ, Օմանի խորհրդակցությունները ստվերվել են նաև իրանական Շահիդ Ռաջայի նավահանգստում տեղի ունեցած պայթյունով, որը 18 իրանցիների կյանք է արժեցել[6]: Չնայած նրան, որ միջադեպը որպես ահաբեկչություն չի ճանաչվել, և դրա հետաքննությունը շարունակվում է, հենց այն փաստը, որ պայթյուն է տեղի ունեցել նավահանգստում, որի միջոցով առևտուր է իրականացվում Իրանի գլխավոր տնտեսական գործընկեր Չինաստանի հետ, հենց ԱՄՆ-ի հետ բանակցությունների ժամանակ հնարավորություն է տվել մի շարք փորձագետների և լրագրողների ենթադրություններ անել տվյալ իրադարձության մեջ ամերիկյան հետքի մասին: Այնուամենայնիվ, դեպքը չխանգարեց իրանական և ամերիկյան պատվիրակություններին մի շարք հուսադրող հայտարարություններ անել Օմանի բանակցություններից հետո, ինչն առնվազն խոսում է շփման կետերի որոնման շարունակականության մասին:

Հարկ է առանձին նշել Իրանի ներկայացուցիչների և Իսլամական Հանրապետության լրատվամիջոցների տոնը, որոնք ամերիկացիների հետ

---

[5] «Լուրջ մթնոլորտ». Իրանն ու ԱՄՆ-ն անցկացրել են բանակցությունների երրորդ փուլը: (ռուս.), 25.04.2025, https://www.bbc.com/russian/articles/cg72p2e5pdvo?ysclid=maaxfocsyd933494673 (բեռնման օրը՝ 02.05.2025):

[6] Faucon B., Gordon M.R., U.S. and Iran Conclude Latest Nuclear Talks, Divided on Key Issues. 26.04.2025, https://www.wsj.com/world/middle-east/u-s-and-iran-divided-by-key-question-in-nuclear-talks-59b26210?mod=hp_lead_pos3 (բեռնման օրը՝ 01.05.2025).

բանակցությունները ներկայացնում են որպես փոխգործակցություն ուժի դիրքերից: Օրինակ, *Javan* պահպանողական պարբերականը հայտարարել էր ուժերի համաշխարհային հավասարակշռությունն Իրանի կողմը թեքվելու մասին[7]: Ի դեպ, դժվար էր այլ համատեքստ ակնկալել՝ հաշվի առնելով Իրանում Դոնալդ Թրամփի և նրա թիմի հեղինակությունը (բացի նախագահից, Իրանի համար խիստ անախորժ են վերջերս պաշտոնաթող եղած ազգային անվտանգության հարցերով խորհրդական Մայք Ուոլցը, պետքարտուղար Մարկո Ռուբիոն, պաշտպանության նախարար Փիթ Հեգսեթը և այլոք): Միաժամանակ տվյալ դիրքորոշումը հնարավորություն է տալիս բանակցել առանց Թեհրանի համար վարկանիշի վնասի, որ հատկապես կարևոր է, հաշվի առնելով ԻԻՀ-ի վարկանիշային կորուստները Գազայի հատվածում ու Լիբանանում Իսրայելի գործողություններն ԻԻՀ-ին հավատարիմ ուժերի դեմ, ինչպես նաև Սիրիայում Բաշար Ասադի իրանամետ ռեժիմի անկումը:

Այնուամենայնիվ, այս պահին պետք չէ խոսել Իրանի և ԱՄՆ-ի դիրքորոշումների ինչ-որ իրական մերձեցման մասին: Իսլամական Հանրապետությունը նախկինի պես հայտարարում է, որ չի ցանկանում միջուկային զենք ունենալ[8], միաժամանակ, հրաժարվելով դադարեցնել խաղաղ միջուկային ծրագիրը, ներառյալ ուրանի հարստացումը, ինչպես նաև ներկայիս փուլում բավականին հաջող իր հրթիռային մշակումները: Երկու կետերն էլ Թեհրանն անվանում է իր «*կարմիր գիծը*» ցանկացած բանակցությունում: ԱՄՆ-ն, իր հերթին, հանդես է գալիս Իրանի կողմից միջուկային վառելիքի հարստացումից լիովին հրաժարվելու և Բուշեհր քաղաքի միակ ատոմակայանի կարիքների համար դրա գնումներին անցնելու օգտին: Բացի այդ, ամերիկացիները, հավանաբար, մոտ ժամանակներս իսրայելական կողմի և եվրոպական պետությունների մատուցմամբ, կոշտ կերպով կբարձրացնեն Իսլամական Հանրապետության հրթիռային տեխնոլոգիաների հարցը:

Իրանցիներն ամերիկյան կողմի նկատմամբ, իրենց հերթին, ունեն իրենց պահանջները, որոնք ԱՄՆ-ը նույնպես չի պատրաստվում կատարել: Խոսքն, առաջին հերթին, պատժամիջոցների գոնե մասնակի վերացման, օրինակ՝

[7] ԱՄՆ-ի հետ բանակցություններն «ինքնավստահություն և գերազանցության զգացողություն» են առաջացրել Իրանում: (ռուս.), 26.04.2025, https://www.vesty.co.il/main/article/rkrvuxqjee (բեռնման օրը՝ 01.05.2025):

[8] Արևելագետը հնարավոր է համարել Թրամփի օրոք Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունների վատթարացումը: (ռուս.), 27.12.2024, https://iz.ru/1814921/2024-12-27/vostokoved-dopustil-ukhud_shenie-otnoshenii-irana-i-ssha-pri-trampe (բեռնման օրը՝ 01.05.2025)

ամերիկյան բանկերում իրանական ակտիվների ապասառեցման մասին է: Այդ կետը բանակցությունների օրակարգում ընդգրկելու մասին հայտնել է, մասնավորապես, ԻԻՀ ԱԳՆ խոսնակ Իսմայիլ Բաղաին[9]: ԱՄՆ-ի համար այդ պահանջի կատարումը եթե ոչ «*կարմիր գիծ*» է, ապա խիստ անցանկալի հեռանկար. չէ՞ որ պատժամիջոցները Թեհրանի վրա ճնշման տարրերից մեկն են՝ ռազմական սպառնալիքների հետ մեկտեղ և՛ Իրանի դաշնակիցների, և՛ հենց Իսլամական Հանրապետության դեմ Իսրայելի բացահայտ ագրեսիայի հենարանը:

Այս ամենը չափազանց դժվարացնում է բանակցությունները: Մինչդեռ, Թրամփն Իրանի ղեկավարությանը և անձամբ այաթոլլա Խամենեիին հիշյալ նամակում 2 ամիս ժամկետ է տվել գործարքը կնքելու համար[10], և չնայած մշուշոտ է այդ ժամկետը և ցնորական է «*վերջնաժամկետը*» (մասնավորապես, այնքան էլ պարզ չէ, թե կոնկրետ երբ պետք է հաշվարկել այդ 2 ամիսը՝ ուղերձի հղումի՞ց, թե՞ բանակցային գործընթացի սկզբից), փորձագետները համակարծիք են, որ մինչ ընթացիկ տարվա աշուն ԱՄՆ-ի առաջնորդը ձգտելու է լուծել Իսլամական Հանրապետության «*միջուկային խնդիրը*»:

Սակայն ամերիկա-իրանական փոխգործակցությունը, ինչպես Դ. Թրամփի, այնպես էլ վերջին տարիների ցանկացած այլ առաջնորդի օրոք, միայն Միացյալ Նահանգների և Իրանի երկկողմ հարաբերությունների հարցը չէ: Դրանք ավանդաբար ներառում են ամերիկյան դաշնակիցներ ու իրանական միջնորդ ուժերը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի և, առհասարակ, աշխարհի մի շարք այլ պետություններ: Իմաստ ունի դիտարկել ԱՄՆ-ի «*իրանական գործը*»՝ ելնելով առաջին հերթին Իսրայելի, Թուրքիայի, Պարսից ծոցի պետությունների և Ռուսաստանի շահերից[11]:

---

[9] Ն. Նազիմօղլու, ԱՄՆ-Իրան. Պատերա՞զմ, թե՞ նոր գործարք: (ռուս.), 27.04.2025, https://oxu.az/ru/politika/ssha-iran-vojna-ili-novaya-sdelka?ysclid=maaxwhwuvo437242569 (բեռնման օրը՝ 01.05.2025):

[10] Վ. Սաժին, Դոնալդ Թրամփը և Իրանը: (ռուս.), 24.03.2025, https://interaffairs.ru/news/show/50830?ysclid=maay 7du8mv308555217 (բեռնման օրը՝ 02.05.2025):

[11] Մերձավոր Արևելք. Ո՞ւմ են արդեն բացառել պատերազմի հավասարումից: (ռուս.), 23.12.2024, https://globalaffairs.ru/articles/blizhnij-vostok-lerman/?ysclid=maay30atq612134340 (բեռման օրը՝ 01.05.2025):

**ԱՄՆ–Իրան հարաբերությունները և Իսրայելը**

Իսրայելը, որը Մերձավոր Արևելքում ԱՄՆ-ի առանցքային դաշնակիցն է, նախորդ վարչակազմի օրոք զգալի ազդեցություն է ունեցել ամերիկա-իրանական հարաբերությունների վրա: Թրամփի օրոք այդ ազդեցությունն ակնհայտորեն կուժեղանա: Նման ենթադրության հիմք են հանդիսանում ինչպես ԱՄՆ-ի նախագահի գործողությունները Սպիտակ տանը նրա նախորդ պաշտոնավարման ընթացքում, այնպես էլ արդեն տեղի ունեցած հայտարարությունները, դեմարշներն ու հընթացս կազմակերպվող միջոցառումները:

Հարկ է նշել, որ 2017–2021 թթ., լինելով ԱՄՆ-ի նախագահ, Դոնալդ Թրամփը, բացի հակաիսրայելական «*Դիմադրության առանցքի*» համակարգող Ղասեմ Սոլեյմանիի վերը նշված սպանությունից, օրինակ, Երուսաղեմը ճանաչեց Իսրայելի մայրաքաղաք՝ այնտեղ տեղափոխելով ամերիկյան դեսպանությունը, փակեց Վաշինգտոնում գտնվող Պաղեստինի ազատագրման կազմակերպության գրասենյակը, ինչպես նաև օրինականացրեց հրեական պետության կողմից սիրիական Գոլանի բարձունքների բռնազավթումը: Ավելին, Իսրայելի արտաքին քաղաքականության դեպքում ամերիկացիների կողմից ինքնին դադարել է կիրառվել *«բռնազավթված տարածքներ»* եզրույթը: Այսպես, օրինակ, Վաշինգտոնն այլևս չի որոշարկել պաղեստինյան տարածքները, որտեղ տեղակայված են իսրայելական անօրինական ռազմական բնակավայրերը[12]:

Բացի այդ, ԱՄՆ-ն այն տարիներին, փաստորեն, նախաձեռնել է Պարսից ծոցի արաբական երկրների հետ Իսրայելի «Աբրահամյան համաձայնագրերը», որոնք կարևոր քայլ են արաբական և, առհասարակ, մահմեդական աշխարհում հրեական պետության մեկուսացումը հաղթահարելու համար:

Թրամփի ներկայիս ժամկետը նույնպես սկզբից ևեթ ԱՄՆ-ի բարեհաճության նմանատիպ մակարդակ է խոստացել Իսրայելին: Օրինակ՝ ԱՄՆ-ի նախագահի թիմի մի շարք անդամներ դեռևս բացահայտ իսրայելամետ գործիչներ են: Նրանց թվում են պետքարտուղար Մարկո Ռուբիոն, ԿՀՎ տնօրեն Ջոն Ռեդկլիֆը, Մերձավոր Արևելքի հարցերով հատուկ բանագնաց Սթիվ Ուիտկոֆը և նույնիսկ Թրամփի փեսա Ջարեդ Քուշները[13]: ԱՄՆ-ում իսրայելական շահերի լոբբինգն իրականացվում է նաև հանրային մակարդակով: Այսպես, Թրամփին նամակ են հղել ամերիկացի 77

[12] Նույն տեղում:

[13] Նույն տեղում:

պաշտոնաթող գեներալներ ու ծովակալներ, ովքեր նախագահին կոչ են արել սատարել Իրանի դեմ Իսրայելի բոլոր ռազմական ջանքերին և Միացյալ Նահանգների ղեկավարին նախազգուշացրել են իրանական միջուկային ծրագրի նկատմամբ անուշադրության մասին, որն, ըստ փաստաթղթի հեղինակների, խիստ վտանգավոր է ողջ աշխարհի համար[14]:

Զարմանալի չէ, որ արդեն փետրվարի 4-ին Թրամփը հրամանագիր է ստորագրել Իսլամական Հանրապետության դեմ տնտեսական պատժամիջոցների խստացման մասին, ինչը, բացի ԻԻՀ-ին նավթային եկամուտներից զրկելուց, ենթադրում է նաև իրանական «*Դիմադրության առանցքի*» չեզոքացում, որն ուղղված է հիմնականում Իսրայելի դեմ և փաստաթղթում կոչվում է ոչ այլ կերպ, քան «*ահաբեկչական ցանց*»:

Ապրիլի 9-ին, խոսելով Իրանի միջուկային խնդրի լուծման տարբերակների մասին, ԱՄՆ-ի նախագահը հայտարարել է, որ այն կարող է լուծվել նաև «*ռազմական ճանապարհով*», և այս դեպքում Իսրայելը կլինի նման միջոցառումների ակտիվ մասնակից[15]:

Հենց իսրայելական ղեկավարությունն է ամեն կերպ դրդում ԱՄՆ-ին և անձամբ Թրամփին խստացնել պահանջները Իրանի նկատմամբ: Իսրայելը վարչապետ Նեթանյահուի շուրթերով հայտարարել է, որ իր համար նախընտրելի կլիներ իրանական հարցի լուծման «*լիբիական*» տարբերակը (այսինքն՝ Իրանի ամբողջական ապամիջուկայնացումը՝ անվտանգության միջազգային երաշխիքների ներքո): Միևնույն ժամանակ, Իրանում հիանալի հիշում են միջուկային ծրագիրը դադարեցրած Լիբիայի առաջնորդ Մուամար Քադաֆիի ճակատագիրը և նույնիսկ հեռանկարում պատրաստ չեն նման քայլի: Ավելին, ժամանակակից Իրանի համար միջուկային ծրագիրը կարևոր է ոչ միայն տնտեսապես, այլև՝ քաղաքականապես: Ունենալով միջուկային զենք արագ ստեղծելու հեռանկարային կարողություն, իրանցիները, գոնե տեսականորեն, ապահովում են իրենց՝ Միացյալ Նահանգների և նրա դաշնակիցների լայնածավալ ռազմական գործողությունից:

---

[14] Նույն տեղում:

[15] Արնի Ա., Թրամփը պատրաստ է ռազմական ուժ կիրառել Իրանի դեմ: (ռուս.), 10.04.2025, https://www.dw.com/ru/tramp-podtverdil-gotovnost-primenit-voennuu-silu-protiv-irana/a-72193570 (բեռնման օրը՝ 28.04.2025):

Իր հերթին, Իսրայելն իրեն չափազանց ագրեսիվ և վճռական է պահում: Նեթանյահուն բացահայտ հայտարարել է իր երկրի՝ 7 ճակատներում պատերազմ սկսելու պատրաստականության մասին, մինչդեռ հրեական պետության զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Էյալ Զամիրն ընթացիկ տարին անվանել է ոչ այլ կերպ, քան «*Գազայի և Իրանի հետ պատերազմի տարի*»[16]:

ԱՄՆ-ին մղելով Իրանի հարցում նվազագույն զիջողականության՝ իսրայելական քաղաքական վերնախավը՝ որպես անկյունաքար, դիտարկում է ոչ այնքան սեփական շահերը, որքան ավելի գլոբալ համատեքստը: Մասնավորապես, պաշտոնական Թել Ավիվը կարծում է, որ Իրանն արդեն չափազանց մոտ է միջուկային զենքի ստեղծմանը՝ ունենալով այնքան ուրան, որ, այն հարստացնելով մինչև անհրաժեշտ 90%-ը, կարող է ստանալ 6 միջուկային լիցք: Իսկ Իրանի կողմից միջուկային զենք ստեղծելու դեպքում, նրա օրինակից, ինչպես կարծում են իսրայելցիները, կարող են օգտվել նաև այլ պետություններ, որոնք դրա համար ունեն տեխնիկական և տնտեսական հնարավորություններ: Դրանց թվում են Թուրքիան, Սաուդյան Արաբիան, Ճապոնիան և, նույնիսկ, ԱՄՆ-ի եվրոպական դաշնակիցները՝ Գերմանիան, Իտալիան, Իսպանիան[17]: Ընդ որում, նման հայտարարությունների լսարանի ուշադրությունից դուրս է հանվում միջուկային զենքին հենց Իսրայելի տիրապետելու փաստը՝ խախտելով բոլոր հնարավոր միջազգային օրենքներն ու կանոնները:

Դ. Թրամփն, ի դեպ, դրական է ընկալում այդ ազդանշանները և, ընդհանուր առմամբ, վստահում է իսրայելցիներին՝ փոխգործակցության առավելագույն մակարդակի հասնելով նրանց հետ ոչ միայն խոսքով: Այսպես, ամերիկյան զինված ուժերն իսրայելցի գործընկերների հետ արդեն զորավարժություններ են անցկացրել Միջերկրական ծովում ընդհանուր թիրախների խոցումը համակարգելու համար: Հաշվի առնելով, որ երկու երկրներն այժմ ընդհանուր նպատակներ ունեն գրեթե բացառապես Իրանի տարածքում, հասկանալի է անցած զորավարժությունների և՛

[16] Լ. Իսսակ, Գերտերությունների համագործակցություն. Ռուսաստանի և ԱՄՆ-ի փոխգործակցության վերանայում Իրանի և Ուկրաինայի համատեքստում: Նյու Յորք (ռուս.), 10.03.2025, https://globalaffairs.ru/articles/sotrudnichestvo-superderzhav-issak/?ysclid=maaywvipe5492857301 (բեռնման օրը՝ 28.04.2025):

[17] Մերձավոր Արևելք. Ո՞ւմ են արդեն բացառել պատերազմի հավասարումից: (ռուս.), 23.12.2024, https://globalaffairs.ru/articles/blizhnij-vostok-lerman/?ysclid=maay30atq612134340 (բեռնման օրը՝ 01.05.2025):

տեխնիկական, և՛ քաղաքական իմաստը: Բացի այդ, Իսրայելի վերջին հարվածներն Իրանին, հրեական պետության ղեկավարության կարծիքով, ցույց տվեցին Իրանի տարածքի ավելի ծավալային խոցման տեխնիկական հնարավորությունը և իրանական ՀՕՊ համակարգի «*անօգուտ*» լինելը: Փետրվարին Դ. Թրամփը բառացի կրկնեց այդ թեզը՝ հայտարարելով իրանական հակաօդային պաշտպանության թուլացման մասին և այդ փաստն օգտագործելով որպես սպառնալիք Թեհրանին[18]:

Եվ, այնուամենայնիվ, չնայած ԱՄՆ-ի և Իսրայելի կողմից Իրանի վերաբերյալ դիրքորոշումների թվացյալ համանվագին, նրանք դեռևս տարաձայնություններ ունեն: Նախ, ամերիկյան հասարակության զգալի մասը, այնուամենայնիվ, չի աջակցում Իրանի դեմ հնարավոր ռազմական գործողությանը: Այս տրամադրությունների արտահայտողը, մասնավորապես, Թրամփի հայտնի աջակից, լրագրող Թաքեր Կառլսոնն է: *X*-ի իր միկրոբլոգում նա ոչ միայն հայտարարել է Իսլամական Հանրապետության հետ հակամարտությունում Միացյալ Նահանգների հնարավոր պարտության մասին, այլև *«թշնամիներ, այլ ոչ թե ԱՄՆ-ի դաշնակիցներ»* է անվանել բոլոր նրանց, ովքեր Վաշինգտոնին դրդում են ռազմական գործողության՝ ակնհայտորեն ակնարկելով Իսրայելին[19]: Երկրորդ՝ Թրամփն ինքը, այնուամենայնիվ, ԱՄՆ-ի նախագահն է և, առաջին հերթին, ուշի ուշով հետևում է իր երկրի շահերին՝ անգամ ի վնաս դաշնակիցների: Օրինակ, նա 17% սակագին սահմանեց Միացյալ Նահանգներ իսրայելական բոլոր արտահանումների համար, ինչը չկարողացան փոխել նույնիսկ Իսրայելի վարչապետ Նեթանյահուի այցը Վաշինգտոն և վերջինիս բանակցություններն ԱՄՆ-ի առաջնորդի հետ: Եվ, չնայած այն հանգամանքին, որ այդ բանակցությունների արդյունքում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Նեթանյահուն հայտարարել է ոչ միջուկային Իրանի և նրա համար *«լիբիական տարբերակի»* վերաբերյալ Վաշինգտոնի և Թել Ավիվի դիրքորոշումների նույնականության մասին, այնուամենայնիվ, դաշնակիցների ընթացիկ հարաբերությունների մակարդակը հարցեր է առաջացնում:

---

[18] Keane I., Trump says reports he's working with Israel to "blow Iran into smithereens' are greatly exaggerated". 05.02.2025, https://nypost.com/2025/02/05/us-news/trump-denies-working-with-israel-to-blow-iran-into-smithereens/ (բեռնման օրը՝ 28.04.2025).

[19] Ս. Շաքարյանց, Արդեն ամերիկացիներն էլ են նախազգուշացնում Թրամփին. «Մենք տանուլ կտանք Իրանի հետ հետագա պատերազմը: Դա ինքնասպանություն է»: (ռուս.), 09.04.2025, https://livenews.am/2025/344240/09/12/14 / (բեռնման օրը՝ 28.04.2025):

Միևնույն ժամանակ, համաձայնելով Իսրայելին ձեռնտու պայմաններին, եթե Իրանը զիջումների չգնա իր «*կարմիր գծերի*» հարցում, Միացյալ Նահանգները կկանգնի միջազգային ասպարեզում դեմքը կորցնելու հեռանկարի առջև: Այդ ժամանակ նա կկարողանա հարվածել ԻԻՀ-ին ոչ միայն ի շահ դաշնակցի, այլև՝ հանուն սեփական վարկանիշի փրկության: Իր հերթին, Իսրայելի համար նման տարբերակը միանգամայն ցանկալի է՝ հաշվի առնելով Թել Ավիվի ձգտումը, մի կողմից, ուժային ճանապարհով լուծել Իրանական հարցը և, մյուս կողմից, միայնակ նման լուծման խնդրահարույց լինելը նրա համար՝ ռազմական ներուժի սահմանափակ լինելու, տարածքի խոցելիության, Իրանի դեմ ցամաքային գործողություն իրականացնելու անհնարինության պատճառով և այլն:

**Թուրքիան և ամերիկա-իրանական հարաբերությունները**

Ամերիկա-իրանական հարաբերությունների անկյունաքարը ներկայիս փուլում Թուրքիայի դիրքորոշումն է, մի կողմից՝ ԱՄՆ-ի դաշնակից և Իսրայելի գործընկեր, բայց մյուս կողմից՝ հավակնոտ և տնտեսապես հզոր տարածաշրջանային տերություն՝ իր սեփական նպատակներով: Այս նպատակները հիմնականում կենտրոնացած են Անկարայի կողմից տարածաշրջանային և արտատարածաշրջանային առավելագույն ազդեցության հասնելու վրա՝ հետագա տարածքային և գաղութային նվաճումները երկու հայեցակարգով՝ պանթյուրքիզմի և պանօսմանիզմի: Ըստ առաջինի՝ Թուրքիայի հավակնությունները տարածվում են մինչև չինական Սինցզյան նահանգ, մինչդեռ ըստ երկրորդի՝ դրանք վերաբերում են ամբողջ արաբական աշխարհին: Միևնույն ժամանակ, Անկարան չափազանց ազդեցիկ է մի շարք ոչ թուրքական երկրներում, որոնք երբեք Օսմանյան կայսրության մաս չեն կազմել, օրինակ, լինելով միջուկային Պակիստանի առանցքային գործընկերը: Իր նպատակներին հասնելու համար Թուրքիան բարեհաճ է ԱՄՆ-ի հանդեպ միայն այնքանով, որքանով դա բխում է իր շահերից՝ միաժամանակ չհապաղելով համագործակցել Միացյալ Նահանգների հակառակորդների՝ Ռուսաստանի և Իրանի հետ: Իսկ թուրքերը խիստ հակասական խաղ են վարում Իսրայելի հետ՝ քննադատելով նրան Գազայում գործողությունների

համար, բայց շարունակելով ակտիվորեն առևտուր անել հրեական պետության հետ և առաջ բերել տնտեսական համագործակցության այլ եզրեր:

Ընդսմին, այժմ իրանական ուղղությամբ Թուրքիայի և ԱՄՆ-ի միջև հատուկ հակասություններ չկան: Անկարան, թեև Իրանի հետ ունի կարևոր տնտեսական և ոչ էական քաղաքական հարաբերություններ, իրականում հակադրվում է Իսլամական Հանրապետությանը ինչպես Մերձավոր Արևելքում, այնպես էլ՝ Հարավային Կովկասում: Առաջին դեպքում Թուրքիային հավատարիմ իսլամիստները տապալեցին Բաշար ալ-Ասադի իրանամետ կառավարությունը Սիրիայում՝ լուրջ քաղաքական պարտություն պատճառելով ԻԻՀ-ին: Երկրորդ դեպքում՝ Անկարան իր դաշնակից Ադրբեջանի հետ միասին հակադրվում է Իրանի կողմից աջակցվող Հայաստանին՝ վերջինիս 2020 թ. պատերազմում կրած պարտության և 2023-ին չճանաչված Արցախի հայկական հանրապետության վերացման ու լիակատար հայաթափման համապատկերում: ԻԻՀ-ն և ՀՀ-ն, իրենց հերթին, բնական տարածքային խոչընդոտ են ստեղծում Բոսֆորից մինչև չինական սահմաններ թյուրքական պետությունների համատարած «*պանթյուրքիստական աղեղի*» ձևավորման համար:

Ավելին, Թուրքիան ազդեցություն ունի նաև ԻԻՀ-ի սահմաններում, որտեղ համագործակցում է երկրի հյուսիս-արևմտյան շրջանների անջատողական տրամադրություններով պանթյուրքիստների հետ, որոնք ձգտում են թուլացնել երկրի կենտրոնական իշխանությունը և ձեռք բերել անկախություն:

Վերջին շրջանում Անկարան բացահայտ սպառնում է Թեհրանին: Մասնավորապես, Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը մեղադրել է ԻԻՀ-ին Սիրիայում ալավիական և քրդական դիմադրությանն աջակցելու մեջ՝ հայտարարելով, որ Իրանն ապակայունացնում է իրավիճակը Սիրիայում և ի պատասխան կարող է այլ երկրների կողմից կազմակերպված ապակայունացման բախվել սեփական տարածքում[20]: Ակնհայտ է, որ Սիրիայի Արաբական Հանրապետությունում Ասադի վարչակարգի տապալումից հետո Թուրքիան ձգտում է այնտեղ լիովին չեզոքացնել իրանական ազդեցությունը, ճնշել ցանկացած դիմադրություն և ամբողջ երկիրը վերածել իր փաստացի գաղութի:

Չնայած Սիրիայի քրդերի վերաբերմամբ առկա հակասություններին, Թուրքիայի վերոնշյալ բոլոր նախաձեռնություններն ամբողջությամբ տեղավորվում են ամերիկյան հակահիրանական քաղաքականության համատեքստում: Ավելին, Թուրքիայի առաջնորդ Ռ. Էրդողանի «*բարեկամ*» Դոնալդ Թրամփի՝ Սպիտակ տուն վերադառնալուց հետո, երկրների միջև որոշ չափով սառած հարաբերությունները նախկին ամերիկյան վարչակազմի օրոք պետք է որ բարելավվեն: Թուրքիան, անկասկած, կսատարի Իրանի նկատմամբ ԱՄՆ-ի ճնշումներին և հնարավոր ռազմական գործողության դեպքում կաջակցի՝ պարզապես այն պատճառով, որ իր տարածքում է ամերիկյան Ինջիրլիք ավիառազմակայանը, որտեղից ամերիկյան ինքնաթիռները կարող են թռչել հակահիրանական գործողության ընթացքում:

ԻԻՀ-ն, իր հերթին, բազմիցս հայտարարել է, որ ցանկացած պետություն, որը Միացյալ Նահանգների կողմից կօգտագործվի իր տարածքին հարվածելու համար, Թեհրանի կողմից դիտարկվելու է որպես պատասխան գործողությունների օրինական թիրախ: Այդ «*թիրախների*» թվում, այդպիսով, կարող է հայտնվել ոչ միայն Թուրքիան, այլև դաշնակից Ադրբեջանը: Տվյալ հեռանկարը հանգեցնում է ամերիկյան գործողության վերածմանը գլոբալ ռազմական բախման և որոշ չափով, ի թիվս այլ բաների, զսպում է Անկարային, Իսլամական Հանրապետության հետ անմիջական բախումից՝ չնայած նրա քաղաքականության և նպատակների ընդհանուր հակահիրանական բնույթին:

Կասկած չկա, որ Թուրքիան Իսրայել չէ, և նրան չի կարելի անվանել ամերիկա-իրանական պատերազմի լոբբիստ: Մեծ մասամբ այդպես է նաև ԱՄՆ-ում Թել Ավիվի համեմատությամբ Անկարայի լոբբիստական հնարավորությունների բազմակի անգամ փոքր լինելու պատճառով: Սակայն ԱՄՆ-ից Իրանի ռազմական պարտությունը նշանակալի գործոն կլիներ Անկարայի կողմից իր արտաքին գրեթե բոլոր հիմնական քաղաքական խնդիրները լուծելու համար:

**ԱՄՆ–Իրան հարաբերությունները**
**և Պարսից ծոցի երկրների դիրքորոշումը**

ԱՄՆ–Իրան հարաբերությունների համատեքստում կարևոր դերակատարներ են նաև Սաուդյան Արաբիան և Պարսից ծոցի մի շարք այլ արաբական երկրներ: Ընդամենը մի քանի տարի առաջ այս բոլոր երկրները, լինելով Միացյալ Նահանգների դաշնակիցներն ու գործընկերները և իրենց տարածքում ունենալով ամերիկյան ռազմակայաններ, Իրանի անվիճելի հակառակորդներն էին: Հարաբերությունները վնասվեցին նաև ն Պարսից ծոցի պետությունների՝ Իսրայելի հետ վաղեմի հակամարտությունը վերը նշված «*Աբրահամյան համաձայնագրերի*» օգնությամբ կարգավորելու փորձերից: Սաուդյան Արաբիան նույնիսկ փաստացի պատերազմի մեջ էր Իրանի հետ՝ խզելով նրա հետ դիվանագիտական կապերը և բացահայտ ռազմական առճակատում վարելով Եմենում իրանամետ «*Անսար Ալլահ*» շարժման հետ:

Սակայն, նախ, հետևեց Իրանի և Սաուդյան Արաբիայի Թագավորության (ՍԱԹ) հաշտեցման չինական նախաձեռնությունը, ինչը հանգեցրեց երկրների կողմից դիվանագիտական հարաբերությունների վերսկսմանը 2023 թ.: Այնուհետև սկսվեցին Պաղեստինյան ճգնաժամը և իսրայելցիների կողմից Գազայի ոչնչացումը, որը մեկուսի չթողեց, այդ թվում՝ Պարսից ծոցի արաբական երկրներին ու պաղեստինյան հարցի վերաբերյալ նրանց դիրքորոշումը փոքր-ինչ մերձեցրեց Իրանի հետ: Բացի այդ, Սաուդյան Արաբիայի փաստացի ղեկավար թագաժառանգ Մուհամեդ բին Սալմանը, ավելի շատ օգուտներ տեսնելով Իրանի հետ խաղաղ փոխգործակցությունից, քան նրա հետ հակամարտությունից, հետևողական քայլեր է ձեռնարկում Թեհրանի հետ փոխգործակցության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ:

Արքայազնի կարծիքով՝ հենց Իրանի հետ արաբական միապետությունների խաղաղությունը կարող է կայունություն հաստատել Մերձավոր Արևելքում, ինչի խիստ կարիքն ունեն նշված արաբական երկրները, որոնք, առաջին հերթին, էներգակիրներ արտահանողներ են: Նավթի և գազի ենթակառուցվածքները խիստ խոցելի են ոչ միայն ուղղակի ռազմական հակամարտության, այլև, նույնիսկ, հակառակորդների դիվերսիոն գործողությունների դեպքում: 2019-ին սաուդյան

կողմն արդեն համոզվել էր դրանում՝ բախվելով իր նավթային օբյեկտների դեմ Եմենից անօդաչու թռչող սարքերի հարձակմանը: Չկասկածելով «*Անսար Ալլահ*» շարժման Եմենի զինյալներին Իրանի կողմից աջակցության հարցում և վախենալով սրացման կրկնվելու դեպքում տնտեսական մեծ կորուստներից, ՍԱԹ-ի ղեկավարությունը ողջամտորեն նախընտրում է խաղաղությունը: Ի դեպ, «*Անսար Ալլահի*» դեմ սեփական ռազմական գործողությունների ձախողումը նույնպես կարելի է համարել ՍԱԹ-ի և Արաբական թերակղզու մյուս միապետությունների կողմից Թեհրանի հետ փոխզիջումների որոնման պատճառ, քանի որ հենց Իրանի մայրաքաղաքում պետք է փնտրել նրա եմենցի միջնորդների հետ փոխըմբռնման որոնման բանալին:

Բացի այդ, Էր-Ռիադը և նրա հարևանները ձգտում են փոխակերպել իրենց տնտեսությունը՝ զարգացնելով նրա ոչ էներգետիկ ոլորտը, ներգրավելով ոչ միայն նավթագազային եկամուտներ, այլև օտարերկրյա ներդրումներ, ինչը չափազանց դժվար է անկայուն տարածաշրջանում:

Ոչ պակաս կարևոր գործոն են նաև Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքական հավակնությունները, որը ձգտում է տարածաշրջանային առաջնորդության և դիտարկում իրեն՝ որպես միջնորդ ամերիկա-իրանական հնարավոր ջերմացման հարցում:

Չպետք է մոռանալ նաև Իրանի «*փաստարկների*» առկայության ու մշտական քանակական աճի և տեխնիկական զարգացման մասին, որոնք մեծացնում են հարևան Պարսից ծոցի երկրների հարգանքը նրա նկատմամբ՝ բալիստիկ հրթիռների, որոնք Իսլամական Հանրապետությանն ամերիկյան ավիահարվածների դեպքում երաշխավորված են թռչել՝ ի պատասխան տվյալ երկրներում տեղակայված ամերիկյան ռազմական օբյեկտների՝ օդանավակայանների, ռազմակայանների, պահեստների, նավահանգիստների և այլն, ինչպես նաև հենց այդ պետությունների ենթակառուցվածքների ուղղությամբ: Հակամարտության ցանկացած ռազմական ելքի դեպքում դա կարող է բոլոր արաբական միապետություններին այնպիսի վնաս հասցնել, որի համեմատ Եմենի ԱԹՍ-ները կթվան հեռավոր կերպով մարտական իրադրությանը մոտ զորավարժություններ: Հաշվի առնելով անգամ ամերիկյան ՀՕՊ համակարգերի անկարողությունը՝ հետ մղել հութիների ԱԹՍ-ների վերոնշյալ հարձակումը, ինչպես նաև հիշելով 2024 թ. իրանական հրթիռների կողմից Իսրայելի տարածքի հաջող խոցումը՝ վերջինիս «*Երկաթե գմբեթով*» հանդերձ,

դժվար թե Պարսից ծոցի երկրները լրջորեն հույս ունենան ապագայում դադարեցնել Թեհրանի «*վրիժառության հարվածները*»:

Կան նաև Իրանի հանդեպ արաբական բարեհաճության արտաքին տնտեսական պատճառներ: Նախ, համաշխարհային տնտեսության ետաճման պայմաններում հետագա ցնցումները ծոցի միապետությունների համար, որոնք կորցնում են նավթագազային եկամուտները Եվրոպայում, Չինաստանում և ԱՄՆ-ում արտադրության կրճատման հետևանքով, կարող են էլ ավելի մեծ, կրիտիկական կորուստներ առաջացնել: Երկրորդ՝ Իրանի հետ Միացյալ Նահանգների պատերազմը երաշխավորված կերպով կհանգեցնի էներգակիրների գների կարճաժամկետ և կտրուկ աճի, որից հետո, ետաճման փուլում մնացած նավթ և գազ ներկրողների տնտեսությունների նույնպիսի ցածր պահանջների համապատկերում, տեղի կունենա ածխաջրածինների արժեքի էլ ավելի մեծ անկում: Դա կհանգեցնի ոչ միայն տնտեսական, այլև, մեծ հավանականությամբ, սոցիալական խնդիրների և, նույնիսկ, տարափոխության՝ էներգակիրներ արտահանող այն երկրների հասարակություններում, որոնք պատրաստ չեն կենսամակարդակի կտրուկ նվազմանը:

Անկասկած է, որ Պարսից ծոցի երկրները դեռ մտավախություն ունեն, որ առաջընթաց կարձանագրեն Իրանը և, հատկապես, նրա միջուկային ծրագրերը: Սակայն այժմ, ի տարբերություն խնդրի տասնամյա վաղեմության, երբ ՍԱԹ-ն ու նրա հարևանները պաշտպանում էին ԳՀՀԾ-ից ԱՄՆ-ի դուրս գալը, նրանք ակնհայտորեն պատրաստ չեն ոչ միայն գլոբալ պատերազմի, այլև նույնիսկ Միացյալ Նահանգների կողմից սահմանափակ տարածաշրջանային գործողության, ինչի հետևանքով էլ վերջին տարիներին ձեռնարկում են բոլոր հնարավոր ջանքերը Վաշինգտոնի և Թեհրանի հաշտեցման համար:

Դեռևս Բայդենի նախագահության օրոք Իրանի հետ մերձեցման և երկխոսության օգտին են արտահայտվել ՍԱԹ-ի թագաժառանգ արքայազնը, նրա արտաքին գործերի նախարար Ֆեյսալ Բին Ֆարհանը, Կատարի էմիր Թամիմ բին Համադ ալ-Թանին, Քուվեյթի վարչապետ Սաբահ Խալիդ աս-Սաբահը և տարածաշրջանի այլ առանցքային քաղաքական գործիչներ: Թրամփի իշխանության գալը չփոխեց այդ միտումը Օվալաձև աշխատասենյակում. Արաբական թերակղզու բոլոր առանցքային պետությունները՝ Սաուդյան Արաբիան, Բահրեյնը, Կատարը և ԱՄԷ-ն, Օմանում ամերիկա-իրանական խորհրդակցությունների նախաշեմին,

միանշանակ արտահայտվել են Վաշինգտոնի և Թեհրանի կողմից փոխզիջման հասնելու օգտին[20]:

**Ռուսական գործոնը և ամերիկա-իրանական հարաբերությունները**

Ռուսաստանը, որն Իրանի հետ ստորագրել է համապարփակ ռազմավարական գործընկերության մասին պայմանագիր և միաժամանակ Դ. Թրամփին ընկալում է որպես պայմանավորվող քաղաքական գործիչ, կարող է առնվազն նվազեցնել ԻԻՀ-ի և ԱՄՆ-ի միջև լարվածության աստիճանը: Դրա հետ մեկտեղ, նշված համաձայնագրի ստորագրման փաստն Իրանում դիտարկում են որպես Իսլամական Հանրապետության արտաքին քաղաքական հնարավորությունների ամրապնդման և դրա ուժեղացման միջոց: Եվ, իրոք, չնայած այն հանգամանքին, որ պայմանագիրը կարևոր քայլ է և՛ ԻԻՀ-ի ու ՌԴ-ի միջև երկկողմ հարաբերությունների ամրապնդման և՛, առհասարակ, եվրասիական ինտեգրման ամրապնդման ուղղությամբ, Իրանը բավականին խստորեն այն կապում է Արևմուտքի և, մասնավորապես, ԱՄՆ-ի հետ իր հարաբերությունների հետ: Ռուս-իրանական փոխգործակցությունը զարգանում է ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների հետ Իրանի խորացող խնդիրներին համահունչ և ի հեճուկս դրանց:

Իրանի ղեկավարությունը, գիտակցելով ներկայումս Իսլամական Հանրապետության խոցելիությունը, ԱՄՆ-ի և Իսրայելի, այդ թվում՝ «*միջուկային հարցի*» պատրաստակամության, ինչպես նաև իր տնտեսական խնդիրների ուժային լուծման համապատկերում, հանձնառու է հարաբերությունների ամրապնդմանը Ռուսաստանի հետ՝ որպես «պաշտպանունակ» այլընտրանքային ուժային կենտրոնի: Ի դեպ, հենց Մոսկվայի և Թեհրանի փոխգործակցության ռազմական կողմն է, որ կարող է Վաշինգտոնին և Թել Ավիվին դրդել վճռական գործողությունների: Իր հերթին, ռուս-իրանական փոխգործակցության բարձր մակարդակն Արևմուտքում ճանաչվում և հաշվի է առնվում նրա երկրների կողմից Մերձավոր Արևելքում սեփական քաղաքականությունը կառուցելու հարցում: Նույն Դոնալդ Թրամփն արդեն փորձել է օգտագործել այդ փոխգործակցությունը՝ առաջարկելով ՌԴ-ին և

[20] Միխին Վ., Պարսից ծոցը հույս ունի, որ ամերիկա-իրանական բանակցությունները հաջողության կհասնեն: (ռուս.), 27.04.2025, https://journal-neo.su/ru/2025/04/27/persidskij-zaliv-nadeetsya-na-uspeh-amerikano-iranskih-peregovorov/ (բեռնման օրը՝ 01.05.2025):

անձամբ Վլադիմիր Պուտինին միջնորդ դառնալ Վաշինգտոնի և Թեհրանի միջև միջուկային հարցում[21]: Խոսքը, հավանաբար, *«Իրանի վրա ազդելու»* Ռուսաստանի ղեկավարությանն ուղղված կոչի մասին էր:

Ռուսաստանը, սակայն, պատրաստ լինելով հանդես գալու որպես իրանա-ամերիկյան մերձեցման միջնորդ, անհրաժեշտ է համարում Իրանի և ԱՄՆ-ի միջև իրավահավասար երկխոսությունը: ՌԴ նախագահի խոսնակ Դմիտրի Պեսկովն արդեն հայտարարել է բանակցությունների միջոցով հակամարտության լուծման անհրաժեշտության մասին:

**Եզրակացություն**

Ինչևէ, հնարավոր ռուսական միջնորդությունն ակնհայտ հաջողություն չի ունենա թեկուզ միայն այն պատճառով, որ Թեհրանում ամերիկացիների հետ բանակցությունների վերաբերյալ փոխհամաձայնություն չկա: Եթե պայմանական բարեփոխականները (նրանց թվում՝ նախագահ Մասուդ Փեզեշքիանը) դեռ վերջերս պատրաստ էին զիջումների՝ տնտեսությունը վերականգնելու և նպատակ ունենալով, որպեսզի ԻԻՀ-ն «*շունչ քաշի*», ապա պահպանողականները չեն պատրաստվում գնալ դրան և չեն վախենում իրադարձությունների զարգացման ամենաարմատական տարբերակներից: Ընդ որում, այս պահին հաղթում է հենց պահպանողական դիրքորոշումը:

Նույնիսկ պահպանողական ճամբարի առանցքային դեմքերից մեկի՝ նախկին նախագահ Իբրահիմ Ռաիսիի, զոհվելուց և ընտրություններում «*բարեփոխական*» Մասուդ Փեզեշքիանի հաղթանակից հետո Իրանի արտաքին քաղաքական ուղեգծի մեջ փոփոխություն դեպի ավելի արևմտամետ ուղղություն տեղի չունեցավ՝ հակառակ համաշխարհային հանրության զգալի մասի սպասումներին: Ինչպես նախկինում՝ արտաքին և ներքին քաղաքականությունը հիմնականում որոշվում է երկրի Գերագույն առաջնորդի և նրա հետ կապված բարձրագույն հոգևորականության կողմից՝ նախագահական լիազորությունների տեխնիկական և տեղային բնույթի համապատկերում:

[21] Bloomberg-ը տեղեկացել է ԱՄՆ-ի և Իրանի միջև միջնորդ դառնալու Ռուսաստանի համաձայնության մասին: (ռուս.), 04.03.2025, https://www.rbc.ru/politics/04/03/2025/67c6e9c49a79478c5a4c9356?ysclid=maazmkqenu654507618 (բեռնման օրը՝ 02.05.2025):

Իրանական հանրությունն, ի դեպ, ընտրություն կատարելով հօգուտ բարեփոխական նախագահի, ընտրում է ԱՄՆ-ի հետ երկխոսությունը և հակահրանական պատժամիջոցների մեղմացումը՝ չհաշված համաշխարհային ռազմական, քաղաքական և տնտեսական առաջնորդի դեմ պատերազմելու իրանցիների դժկամությունը: Եվ դա չի կարող զարմանք հարուցել՝ հաշվի առնելով այն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնց բախվում է իրանցիների մեծ մասը՝ 2018 թ. «*միջուկային գործարքից*» Միացյալ Նահանգների դուրս գալուց հետո: Այդ ժամանակվանից ի վեր իրանական ռիալը արժեզրկվել է 23 անգամ, իսկ երկրում վերջին տարիներին գնաճը կազմել է 40-50%, ընդ որում՝ այդ ցուցանիշը շատ ավելի բարձր է պարենային ապրանքների պարագայում: Արդյունքում՝ իրանցիների մոտ մեկ երրորդը հայտնվել է աղքատության շեմից ցածր վիճակում, ինչն էլ, իր հերթին, մարդկանց դուրս է բերում գործադուլների և փողոցային բողոքի ցույցերի: Դրան գումարվում է նաև հասարակության որոշ շերտերի դժգոհությունը ժամանակակից Իրանի պահպանողական կարգերից՝ կանանց համար հիջաբի պարտադիր կրում, ալկոհոլի և հասարակական զվարճանքի միջոցառումների արգելում և այլն:

Միացյալ Նահանգներն ու նրա դաշնակիցներն իրենց հերթին հետևում են իրանական հասարակության նման բողոքի աշխուժացմանը՝ ձգտելով այն օգտագործել իրենց նպատակների համար: Որպես այս թեզի լուսաբանում՝ հարկ է հիշեցնել հիջաբի դեմ բողոքող իրանցիների հանդեպ ԱՄՆ-ի և եվրոպական երկրների բարեհաճությունը Մահսա Ամինիի մահվան աղմկահարույց դեպքից հետո, ինչպես նաև Թուրքիայի հետաքրքրությունն Իրանի Ուրմիա նահանգում վերջերս տեղի ունեցած պանթուրքիստական գործողությունների նկատմամբ:

ԻԻՀ-ի կառավարությունը ձգտում է դժգոհությունը մեղմել ոչ միայն դաժան ճնշումներով, այլև զիջումներով. մասնավորապես, նախագահ Փեզեշքիանը և նրա կողմնակիցները փակել են իրանցի կանանց արտաքին տեսքի նկատմամբ պահանջների հնարավոր խստացման հարցը՝ մեջլիսում ընթացք չտալով համապատասխան օրինագծին: Այնուամենայնիվ, Իրանի սոցիալական, տնտեսական և մշակութային խնդիրները և դրանց պատճառները շարունակում են մնալ արդիական և լուծման կարիք ունեն: Դա ավելի ու ավելի դժվար է դառնում ԱՄՆ-ի հետ հարաբերությունների բարդացման համապատկերում:

ԱՄՆ–Իրան բանակցությունների ելքը, անկասկած, գլոբալ նշանակություն ունի թե՛ անվտանգային, թե՛ տնտեսական առումներով: Պատժամիջոցների չեղարկումը

Իրանին կվերադարձնի միջազգային էներգետիկ շուկա, ինչը կազդի էներգակիրների գների վրա, իսկ արևմտյան ընկերությունները կկարողանան ձեռք բերել իրանական սպառման հսկայական շուկա: Դրա սկիզբն արդեն ի հայտ էր եկել 2016 թ., սակայն տորպեդահարվել էր նախկին «*միջուկային գործարքից*» ԱՄՆ-ի դուրս գալու պատճառով: Ինչ վերաբերում է անվտանգությանը, ապա Վաշինգտոնի և Թեհրանի խորհրդակցությունների հաջողությամբ, առանց այդ էլ անկայուն և բարդ մերձավորարևելյան տարածաշրջանը, որը մինչ օրս լի է պատերազմներով, ցեղասպանություններով, ավերածություններով և մարդու հիմնարար իրավունքների խախտումներով, կխուսափի էլ ավելի մեծածավալ աղետից: Վերջինս, միանշանակ, կարող է դառնալ ոչ միակ, բայց չափազանց կարևոր պատճառը էլ ավելի գլոբալ, համաշխարհային պատերազմի համար, ինչից, հավանաբար, դատելով զուսպ հռետորաբանությունից, փորձում են խուսափել ինչպես նորընտիր ամերիկյան առաջնորդը, այնպես էլ՝ նրա Եվրասիական գործընկերները՝ ոչ միայն իրանական, այլև ռուսաստանյան կամ չինական: Իր նախընտրական քարոզարշավի ընթացքում Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ իր նախագահության ընթացքում ԱՄՆ-ը թույլ չի տա որևէ նոր պատերազմ: Առայժմ, չնայած բոլոր «*բայց*»-երին, նա հաստատում է այս խոսքերը: Ապագայում շատ բան, ինչպես իրանական, այնպես էլ ամերիկյան արտաքին քաղաքականության այլ ոլորտներում, կախված կլինի ամերիկյան առաջնորդի անկեղծությունից, իրական հնարավորություններից և սուբյեկտիվությունից:

## ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Իրանը ԱՄՆ-ի հետ բանակցություններում կքննարկի արտասահմանյան ակտիվների ապասառեցումը: 28.04.2025, https://ria.ru/20250428/iran-2013789354.html?ysclid=maawuj19bo788934371

2. Banai H., Black Swan Scenarios in U.S.-Iran Relations during Trump's Second Term. 16.04.2025, https://perryworldhouse.upenn.edu/news-and-insight/black-swan-scenarios-in-u-s-iran-relations-during-trumps-second-term/

3. «Լուրջ մթնոլորտ». Իրանն ու ԱՄՆ-ն անցկացրել են բանակցությունների երրորդ փուլը: 25.04.2025, https://www.bbc.com/russian/articles/cg72p2e5pdvo?ysclid=maaxfocsyd933494673

4. Faucon B., Gordon M. R., U.S. and Iran Conclude Latest Nuclear Talks, Divided on Key Issues. 26.04.2025, https://www.wsj.com/world/middle-east/u-s-and-iran-divided-by-key- question-in-nuclear-talks-59b26210?mod=hp_lead_pos3

5. ԱՄՆ-ի հետ բանակցություններն «ինքնավստահություն և գերազանցության զգացողություն» են առաջացրել Իրանում: 26.04.2025, https://www.vesty.co.il/main/article/rkrvuxqjee

6. Արևելագետը հնարավոր է համարել Թրամփի օրոք Իրանի և ԱՄՆ-ի հարաբերությունների վատթարացումը: 27.12.2024, https://iz.ru/1814921/2024-12-27/vostokoved-dopustil-ukhudshenie-otnoshenii-irana-i-ssha-pri-trampe

7. Ն. Նազիմօղլու, ԱՄՆ-Իրան. Պատերա՞զմ, թե՞ նոր գործարք: 27.04.2025, https://oxu.az/ru/politika/ssha-iran-vojna-ili-novaya-sdelka?ysclid=maaxwhwuvo437242569

8. Վ. Սաժին, Դոնալդ Թրամփը և Իրանը: (ռուս.), 24.03.2025, https://interaffairs.ru/news/show/ 50830?ysclid=maay 7du8mv308555217

9. Մերձավոր Արևելք. Ում են արդեն բացառել պատերազմի հավասարումից: 23.12.2024, https://globalaffairs.ru/articles/blizhnij-vostok-lerman/?ysclid=maay30atq612134340

10. Արնի Ա., Թրամփը պատրաստ է ռազմական ուժ կիրառել Իրանի դեմ: 10.04.2025, https://www.dw.com/ru/tramp-podtverdil-gotovnost-primenit-voennuu-silu-protiv-irana/a-72193570

11. Լ. Իսսակ, Գերտերությունների համագործակցությունը. Ռուսաստանի և ԱՄՆ-ի փոխգործակցության վերանայում Իրանի և Ուկրաինայի համատեքստում: Նյու Յորք (ռուս.). 10.03.2025, https://globalaffairs.ru/articles/sotrudnichestvo-superderzhav-issak/?ysclid=maaywvipe5492857301

12. Keane I., Trump says reports he's working with Israel to "blow Iran into smithereens' are 'greatly exaggerated". 05.02.2025, https://nypost.com/2025/02/05/us-news/trump-denies-working-with-israel-to-blow-iran-into- smithereens/

13. Ս. Շաքարյանց, Արդեն ամերիկացիներն էլ են նախազգուշացնում Թրամփին. «Մենք տանուլ կտանք Իրանի հետ հետագա պատերազմը: Դա ինքնասպանություն է»: 09.04.2025, https://livenews.am/2025/344240/09/12/14/

14. Միխին Վ., Պարսից ծոցը հույս ունի, որ ամերիկա-իրանական բանակցությունները հաջողության կհասնեն: 27.04.2025, https://journal-neo.su/ru/2025/04/27/persidskij-zaliv-nadeetsya-na-uspeh-amerikano-iranskih-peregovorov/

15. Bloomberg-ը տեղեկացել է ԱՄՆ-ի և Իրանի միջև միջնորդ դառնալու Ռուսաստանի համաձայնության մասին: 04.03.2025, https://www.rbc.ru/politics/04/03/2025/67c6e9c49a79478c5a4c9356?ysclid=maazmkqenu654507618